## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2020 թվականի թիվ 30-Ա
ք. Երևան

### «ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳԻՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի, 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագիր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2020 թվականի մայիսի 4-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Բավարարել «ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագիր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2020թ. մայիսի 19
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2020 թվականի մայիսի 19-ի թիվ 30-Ա որոշման

| **Հեռուստածրագրի անվանումը** | **Թույլտվության ժամկետի ավարտը** |
|---|---|
| «21 TV» | անժամկետ |